Գուրգեն Մահարի

Ծաղկած փշալարեր

14

. . . Ես տեսնում եմ Բալաշովի դեմքը, որից հետո մարում է լուցկին, և ես լսում եմ նրա ձայնը .

— Վե՛ր կաց, հագնվիր, կուշանանք . . .

Այդ նա էր խտուտ տալիս, որ զարթնեմ:

Ես վեր եմ թռչում: Գնում ենք Առաջին: Այդ միջոցին վառվում է մի ուրիշ լուցկի . Աշոտ դային է ճրագը վառում .

— Հագնվիր, հայդո՛ւկ, գնում ես . . . համարյա ուրիշ քաղաք . . . էլ ի՞նչ ես ուզում . . .

Ոչի՛նչ, ոչի՛նչ չեմ ուզում, կեցցե՛ համեմատական-հարաբերական երջանկությունը: Ես արագ-արագ կարգի եմ բերում ինձ:

— Ինչպե՞ս քնեցիր, — հարցնում է Աշոտ դային:

Պատասխանի փոխարեն ես սեղմում եմ բռունցքս և ցցում ցուցամատս, — այսինքն՝ շա՛տ լավ:

Աշոտ դային տխուր ժպտում է: Աշոտ դայուն չես խաբի:

Յատուկ Պոէմ

— Տա աստված, որ այդպես լինի, — ասում է նա, — վերցրո՛ւ իմ ձեռնոցները . ավելի տաք են: Հագիր իմ շուբը . . . Ես տանը նստած եմ . . .

Ես ուզում եմ բողոքել, իսկ նա կարճ է կտրում:

— Արա՛ ինչ որ ասում եմ, հայդուկ, քեռանց տուն չես գնում . . .

Եվ ես անում եմ, ինչ նա է ասում:

Երբ պատրաստվում եմ իմ բավականին հարուստ տոպրակով վար իջնել, երևում է նորից Բալաշովը կազմ ու պատրաստ: Բալաշովի բերանը մի քիչ ծուռ է, նա խոսում է կես բերան և աշխատում է գլուխը թեքել մի կողմի վրա՝ որ բառերը դուրս թռչեն բերանից . ձայնը ճղճղան է, և նա թողնում է միամիտ մարդու տպավորություն: Նա դեմքը ծածկել է, թողել միայն տեսնելու և խոսելու բաց հարմարություն:

— Պատրա՞ստ ես, — հարցնում է նա, — խելքս չի կտրում, ինչո՞ւ քեզ կապեցին պոչիցս . . .

Ես մտնում եմ Աշոտ դայու հնամաշ, բայց տաք մուշտակի խորքերը, հագնում նրա ձեռնոցները և վզիս նետում տոպրակը:

— Բալաշով, — ձայն է տալիս Աշոտ դային, — չնեղացնե՛ս, թե չէ . . .

Նա ցույց է տալիս ինձ և ցուցամատով սպառնում:

— Լսում եմ, — ասում է Բալաշովը, — գնացինք . . .

Դռների մոտ ես ետ եմ նայում: Մութ, քնած բարաքի խորքում վառվում է միայն Աշոտ դայու աղոտ ճրագը:

Բալաշովն առաջից, ես՝ ետևից, մենք կտրում ենք ճամբարը երկարությամբ և հասնում պահականոցը: Բալաշովը ձեռնոցներով ծեծում է դուռը:

— Ո՞վ է, — հարցնում է մեկը քնկոտ ձայնով:

Յատուկ Պոէմ

— Կալանավոր Բալաշով, — զեկուցում է նա, — հրամայված է Առաջին գնալ . . .

— Ֆու, խոլերա, — փնթփնթում է նույն ձայնը, հետո մեր ականջին հասնում է, Բալաշով, Ադ . . . Ադ . . . (նա երևի աշխատում է կարդալ իմ ազգանունը . . .): Դու մենա՞կ ես . . .

— Մենք երկու հոգի ենք, քաղաքացի մարտիկ, համաձայն կարգադրության, — Բալաշով և Ադ . . . Ադ . . . մի խոսքով Անդիժան . . .

— Այդ է որ կա, — ասում է նույն ձայնը, դուռը բացվում է, մենք ներս ենք մտնում: Քառակուսի, ոչ մեծ սենյակ է այս պահակատուն կոչվածը, սեղանին՝ աղոտ մի ճրագ, պատերի տակ դրված երկար նստարաններին քնած են երեք հոգի: Վառարանը չի վառվում, բայց ներսը տաք է, օդը կծված՝ մախորկայի ծխից: Մեզ ընդունողը հորանջում է կարճ ու գործնականորեն և մոտենում քնածներից մեկին .

— Մազուրով, վե՛ր կաց, եկել են . . .

— Եկե՞լ են, — աչքը բաց է անում Մազուրովը, — ֆու, սատանա . . . երազումս . . .

Նա նայեց մեզ վրա և լռեց, ըստ երևույթին մտածելով, որ կալանավորների ներկայությամբ երազ պատմելը քաղաքական տեսակետից առողջ երևույթ չէ: Նա արագ նստեց, թաղիքե ոտնամանները քաշեց ոտքերին, գլխարկի ականջները կապեց, հագավ մուշտակը, անկյունից վերցրեց հրացանը և հրահանգեց .

— Գնացի՛նք . . . ընկեք առաջ, մա՛րշ . . .

Հերթապահը բացեց ելքի դուռը, և մենք դուրս եկանք ճամբարից:

Ցուրտ, պարզկա գիշեր է: Սառը քամին թիկունքային է . այս էլ մի հաջողություն է: Ինձ պատել էր օտարոտի մի զգացողություն: Մոտավորապես այսպես եմ ես ինձ զգացել երևի, երբ մանկությանս օրերին ինձ հագցրին դեռ լույսը չբացված,

Յատուկ Դոէմ

դրեցին հորեղբորս՝ Պանտիչի ձիու թամբին, և մենք բռնեցինք Արճակի Էրմանց գյուղի ճանապարհը: Գոնե ես ուզում եմ համոզվեմ, որ ինձ այդպես զգամ: Այն ժամանակ մենք գնում էինք խաղաղ, դաշտային ճանապարհով, հիմա գնում ենք ձյուների միջով, սակայն ի՛նչ կարևոր է, այն ժամանակ մենք գնում էինք ձիով, հիմա՝ ոտով . ի՛նչ մեծ բան է որ, այն ժամանակ . . . հիմա . . .

Մեր ճանապարհով սահնակներ են անցել, իսկ ճանապարհի երկու կողմը և հեռվում՝ հորիզոնից հորիզոն ձյուն է, անսահման, անարատ, անծայրածիր ձյուն, որը հիմա թվում է մութ-մուգ կապտավուն: Երկնքում աստղեր կան, նրանք վառվում են մեծ ու փոքր, վառ ու աղոտ ճրագների նման ցփնված երկնքի տիեզերական ափսեին: Բալաշովի հետ մենք քայլում ենք կողք-կողքի, մեր թաղիքե ոտնամանների տակ ճռճռում է ձյունը, նայած տեղին՝ խրթխրթում, մոմոում: Մեր ականջին հաճախ հասնում է ուղեկցող մարտիկի ոտնաձայնը, իսկ երբեմն լսում ենք միայն մեր սեփական ոտնաձայնը: Այդ նշանակում է, որ նա մեզ հետևում է երբեմն հեռվից, երբեմն մոտից: Մենք անցնում ենք հրդեհաշեջ աշտարակը, մտնում անմարդ ու ամայի գործարար բակի սահմանները: Ահա փոսից դուրս երևացող բրուտանոցի տանիքը, կոնուսաձև քուրայի վերջավորությունը: Հիմա մենք դուրս ենք եկել գործարար բակի սահմաններից և գնում ենք դեպի երրորդ ստանը: Բալաշովը նախ քթի տակ ինչ-որ մռլտում է, հետո միայն պարզվում է, որ նա երգում է: Ի՞նչ է երգում, որոշել դժվար է, ամեն դեպքում երգը միօրինակ է, միանվագ, սիրտ ցավեցնելու աստիճանի միապաղաղ:

Երրորդ ստանի գետնափորերը ծածկված են ձյունով, իսկ ծածկերի խոտը քամիները քշել են աշխարհի չորս կողմերը: Կմախքի նման ուրվագծվում են սյուները, հաստ ու բարակ ձողերը, գերանները: Եթե գետնափորերից մեկնումեկից ծուխ բարձրանար, բոլորովին այլ կլիներ զգացողությունը: Չկա ոչ ծուխ, ոչ կենդանի շունչ, և այս թողնում է ճնշող, համարյա աղետալի տպավորություն: Հիմա Բալաշովը խոսքերով է երգում, և որովհետև նույն բառերն է կրկնում նա, շուտով հայտնի է դառնում երգի ամբողջ տեքստը:

Սիրելի՛ս, սիրելի՛ս, ես քոնն եմ,

Ախ, այսպես էլ մութ գիշե՞ր . . .

Ահա ամբողջը:

Քայլում է նա քսան քայլ, նախ մոմոալով միայն երգի եղանակը, հետո ասես նոր թափ է առնում և հիշում .

Սիրելի՛ս, սիրելի՛ս, ես քոնն եմ,

Ախ, այսպես էլ մութ գիշե՞ր . . .

Գնում են ձյունոտ, գիշերային դաշտերով երեքը, երկուսն առաջից, անզեն, հետևում է նրանց զինված երրորդը, և երեքից ոչ մեկը չի մտածում, թե ինչո՞ւ այսպես դասավորվեց, և ընդհանրապես այս ի՞նչ դասավորություն է: Այս ի՞նչ զարմանալի շարժիչ ուժով նրանք դուրս թռան իրենց երկրից և իրենց տներից, ընկան սիբիրյան այս դաշտերը և մութ գիշերով գնում են ձյունոտ ճանապարհով, երկուսն անզեն, առաջից, իսկ երրորդը զինված՝ հետևից: Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ, ինչպե՞ս:

Սիրելի՛ս, սիրելի՛ս, ես քո՛նն եմ,

Ախ, այսպես էլ մութ գիշե՞ր . . .

— Լսիր, դո՛ւ, — լսվում է ուղեկցողի ձայնը, — երգում ես, կարգին երգիր, ի՞նչ ես նույն բանը վնգստում, խոսքերը չգիտե՞ս . . .

— Չգիտեմ, քաղաքացի մարտիկ, — խեղճացած, ձեռները թափ տալով, առանց հետ նայելու ճղճղում է Բալաշովը, — բոլոր խոսքերը մոռացել եմ, միայն այս եմ հիշում . . .

— Սատանան քեզ հետ, — մեղմանում է ուղեկցող պահակը, — երգիր . . . միտք չկա մեջը, բայց մարդու սիրտը կտոր-կտոր է լինում:

Հիմա Բալաշովը չի երգում, թվում է, թե մի ամբողջ հավիտենականություն մենք քայլում ենք լուռ: Արևելքում արճճագույն մի շերտ է ձգվում: Շերտը գնալով լայնանում է, այդ առավոտն է բացվում ծանր երկունքով: Ուղեկցող պահակն արագությամբ նայում է Բալաշովի դեմքին .

Յատուկ Պոէմ

— Չե՞ս լսում, ասացի՝ երգի՛ր:

Բալաշովն ասես սթափվում է, գլուխը կրիայի նման առաջ պարզում .

Սիրելի՛ս, սիրելի՛ս, ես քոնն եմ . . .

Հազը բռնում է, և նա ձեռքը վերից վար թափ է տալիս .

— Պատվերով դուրս չի գալիս, — գանգատվում է նա:

Մինչ այս, մինչ այն, երևում է Առաջինը: Ճարտարապետությունը նույնն է, նույն տախտակյա բարձր ցանկապատերը, նույն փշալարերը, միայն այստեղ չորս հսկիչ աշտարակների փոխարեն երկուսն են, ճամբարի փոքրության պատճառով երևի: Ծխնելույզները ծխում են, առանձնապես մեկը: Դա պետք է, որ խոհանոցի ծխնելույզը լինի:

Հիմա որ՝ լույս է: Արևի ծիրանագույն լույսը տարածվում է սպիտակ դաշտերի վրա: Մենք կանգնած ենք հիմա Առաջինի դարպասների և պահականոցի մուտքի դռան մոտ: Մեզ ուղեկցող մարտիկն առաջ է անցնում և փոքր պատուհանից ներս է նայում:

— Բացեք դուռը:

— Հիմա, — լսվում է ներսից, — դո՞ւ ես, Մազուրով:

— Ես եմ:

Դուռը բացվում է ու մենք ներս ենք մտնում:

Առաջին տպավորությունն այն է, որ մենք գտնվում ենք մեր ճամբարի պահականոցում: Նույն միջանցիկ միջանցքը, նույն քառակուսի սենյակը, նույն կահավորությունը, մինչև անգամ նույն հոտը: Իսկ երբ Բալաշովի առաջնորդությամբ մենք մուտք ենք գործում Առաջին ճամբարը, անմիջապես զգում ես ու տեսնում, որ եկել ես ուրիշ մի երկիր կամ քաղաք: Փոքր է այս երկիրը կամ քաղաքը, բայց թվում է, թե ես ծանոթ եմ ու վաղածանոթ նրա բանկիչներին:

Յատուկ Պոէմ

Ծանոթ են նրանց հագուստ-կապուստը, նրանց մտահոգությունները, նրանց դեմքի և աչքերի արտահայտությունը: Ես անմիջապես որոշում եմ կանանց բարաքը: Մինչդեռ տղամարդկանց բարաքների առաջ արևի տակ փայլում են կլորաձև, սառած, արհեստական լճակներ գիշերային փոքր կարիքի համար, կանանց բարաքը զուրկ է այդ «զարդարանքից» և ավելի վայելուչ տեսք ունի:

Ուղեկցող պահակը հրամայում է մեզ ներկայանալ գրասենյակ, կարգադրիչին, իսկ երեկոյան, երբ կարգադրիչը մեզ կազատի աշխատանքից, ներկայանալ պահականոց՝ «տուն վերադառնալու համար», և նրա այդ խոսքերից օդը ջերմանում է:

Հիմա Բալաշովն առաջից, ես՝ ետևից, գնում ենք դեպի գրասենյակը: Հակառակ ճամբարի փոքրության, գրասենյակը մեծ է և դա հասկանալի է: Առաջինի գրասենյակն է տանում և մշակում Նովոիվանովյան ճամբարային չորս կետերի գրասենյակների գործերն ու նյութերը:

Իսկ կարգադրիչն ավելի փոքրակազմ է, փոքրամարմին, բայց ավելի արագ ու շարժուն:

— Ա՛, եկա՞ր, պրոֆեսոր, — ասում է նա՝ դիմելով Բալաշովին վաղուցվա ծանոթի պես, — իսկ սրա՞ն ինչու են ուղարկել:

— Չգիտեմ, — կարճ կապում է Բալաշովը՝ հիշելով երևի Աշոտ դայու ցուցամատը:

— Գնա՛ գործիքային ցեխ և վերցրու անհրաժեշտ գործիքներ: Ահա տեսնո՞ւմ ես այս տախտակները . դու ահա այստեղից այնտեղ և այնտեղից այստեղ . . . մի խոսքով, շինելու ես բյուրոկրատական արգելք, որը պիտի բաժանի կալանավոր հաճախորդներին՝ գրասենյակային առնետներից . . . այստեղ և այստեղ՝ շարժական մուտք: Մի խոսքով հիմա գնացեք խոհանոցի պատուհանի մոտ, ես կկարգադրեմ, որ ձեզ կերակրեն . . . Իսկ քո մասին (նա մատիտով երեք անգամ չխկացրեց Աշոտ դայու մուշտակի կոճակներից մեկին) մի բան կմտածենք:

Յատուկ Պոէմ

Մենք հանում ենք մեր տոպրակներից մեր ճաշամաններն ու գդալները, դուրս ենք գալիս կարգադրիչի հետ գրասենյակից և մեր քայլերն ուղղում դեպի խոհանոցը: Կարգադրիչը տիրական քայլերով մտավ խոհանոց, իսկ մենք մտանք ծածկի տակ, ուր և գտնվում է այն պատուհանը, որից բրիգադները ճաշ են ստանում: Շատ չանցած, պատուհանը բացվում է և Մեսրոպի գլխին ոչ մի բանով չնմանվող մի գլուխ գոռում է .

— Երրորդից՝ երկո՛ւ . . .

— Այստեղ ենք, — ճչում է Բալաշովը և ներս խոթում իր ամանը:

Բալաշովն ստանում է իր նախաճաշը: Նրա ամանից շոգի է բարձրանում, և իմ քթին է հասնում դարավոր կաղամբի ծանոթ բուրմունքը, որը թվում է ինձ անչափ դուրեկան: Եվ ճիշտ այն րոպեին, երբ ես նույնպես ստանում եմ իմ նախաճաշը և ուզում եմ շտապել Բալաշովի հետևից, պատուհանին է մոտենում բամբակած բաճկոնով, սպիտակ շալով երիտասարդ մի կին և պարզում է իր ամանը:

— Հանդերձապա՛հ, — ասում է խոհարարը, — ե՞րբ ես փոխելու մեր սրբիչները:

— Հենց այսօր, քեռի Միտրոֆան, — պատասխանում է կինը և հասնում իմ հետևից, փակ ամանը ձեռքին .

— Դուք որտեղի՞ց եք եկել, — հարցնում է նա:

Ես պատասխանում եմ:

— Մի օրո՞վ:

— Մինչև երեկո:

Հետո պարտք չմնալու համար ես եմ հարցնում .

— Իսկ դուք որտեղի՞ց . . .

— Ե՞ս . . . ես ընդհանրապես Մինսկից . . .

Ես մտքով թռչում եմ դեպի լուսավոր անցյալը, Մինսկ, 1936 թիվ . . . և ես կրակում եմ .

— Ա՛, Մի՛նսկ . . . ես եղել եմ Մինսկում: Յանյակի հետ քեֆ եմ արել . . .

— Իսկ ո՞վ է Յանյակը, — հարցնում է նա և, ըստ երևույթին, լարում է հիշողությունը:

— Յանկա Կուպալա և Յակոբ Կոլաս . . . նա ապրում էր միհարկանի տան մեջ, հին բակով, նրա տունը ծածկում էին ակացիաների ճյուղերը . . .

— Ճիշտ է, — ասում է նա, — դա Յանկա Կուպալայի տունն էր: Գնանք, գնանք ինձ մոտ, կնախաճաշենք, կխոսենք . . .

Ես հլու-հնազանդ հետևում եմ նրան:

Լարիսա Սեմյոնովնան այստեղ թագուհի է ու աստված: Նրա ոչ մեծ սենյակի խորքում, տախտակյա հատուկ հարմարանքի վրա, կանոնավոր կերպով դասավորված են զանազան հանդերձանքներ: Մի անկյունում նրա երկաթե հասարակ մահճակալն է, մյուս անկյունում՝ թիթեղե վառվող վառարանը: Նա արագ և առարկություն չընդունող շարժումներով վերցնում է իմ նախաճաշն ու իր նախաճաշը, լցնում է մի ալյումինե ամանում, հետո փոքրիկ պահարանից հանում է երկու միջին մեծության սոխի գլուխ և ուղղակի մանրում մեր նախաճաշի վրա, ապա մի քանի բարակ շերտ խոզի ճարպ . . . ու ծածկում կափարիչով:

— Օրենքով, ասում է նա, սոխն ու ճարպն առանձին պետք է տապակել, հետո լցնել . . . ավելի . . . համով կստացվեր . . . բայց դուք կարող եք ուշանալ . . . Ձեզ կարող են կանչել . . . ի՞նչ էի ուզում ասել . . . մենք որտե՞ղ մնացինք . . .

— Մինսկում, — պատասխանում եմ ես:

— Այո, Մինսկում, Մինսկում . . .

Յատուկ Պոէմ

Լարիսա Սեմյոնովնան պատկանում է 37 թվականի հունձին, ամուսինը՝ կուսաշխատող, նույնպես հնձվել է: Ինքը՝ միջնակարգ դպրոցի ուսուցչուհի, մայր երկու զավակների, զավակները գտնվում են քրոջ մոտ, որի հետ և կապ ունի . . . ոչ, ոչ մի կապ, ոչ մի տեղեկություն չունի ամուսնուց, չի էլ ուզում օրորել իրեն սին հույսերով: Նրան տանջում է միայն երեխաների կարոտը . . . ուրիշ ոչ մի ռոմանտիկա, ոչ մի, ոչ մի հույս ու պրետենզիա . . . Լարիսա Սեմյոնովնան չի առարկում, գուցե փոխվի իրադրությունը, համաձայն դիալեկտիկայի ամեն ինչ փոխվում է, ամեն ինչ շարժվում, բայց միշտ չէ, որ պատմությունը պրոգրես է ապրում . կա 1905 թվականի ռեակցիան, կա 37 թիվ . . . տարբեր են ժամանակները, բայց պատմությունը զիգզագներ չի ճանաչում, պատմությունը հակամետ է ավելի ստանդարտ զուգահեռների, այլապես կկորչեն օրենտիրները . . . պետք է նայել երևույթներին ռեալիստորեն, ո՛չ մի միստիֆիկացիա . . . մնացյալը ֆիկցիա է . . . ֆանտազիաներով ապրելը հիմարություն է:

Նախաճաշն արքայական էր, եթե չասենք՝ ավելին: Հետո Լարիսա Սեմյոնովնան օգնում է, որ ես զգեստավորվեմ, անձամբ կապում է գլխարկիս կապերը, և ճիշտ այդ րոպեին ես ժամանակ եմ գտնում ասելու, որ ես մի կերպ պետք է տեսնեմ ծննդաբերական տանն ապրող գերմանուհի Լյուդմիլա Շարթին . . . այո՛, նրան մեր ճամբարից բերին . . . վերջերս է ազատվել . . . ուզում եմ ասել՝ մայր է դարձել . . .

Լարիսա Սեմյոնովնայի մեծ-մեծ, կապույտ աչքերն ավելի են մեծանում, և նա քանդում ու նորից է կապում իմ գլխարկի կապերը: Նրա դեմքն ստանում է մտահոգ արտահայտություն:

— Այո, — ասում եմ ես, — նրա համար ես հոգեշահ բաներ եմ բերել: Մենք շատ, շատ ուրախ ենք այդ նորածնի համար . . .

— Մե՛նք, այդ ովքե՞ր են, — հարցնում է Սեմյոնովնան խոր շնչելով:

— Մե՛նք, բրուտանոցի աշխատողներս, — պատասխանում եմ ես:

Ժպիտի նման մի բան է անցնում նրա դեմքով .

— Ի՞նչ է դա . . . կոլեկտիվ ստեղծագործությո՞ւն է, — ծիծաղում է նա անուրախ ծիծաղով ու հարցնում, — ինչպես կոչվում նա՞ . . .

— Լյուդմիլա Շարթ:

— Շա՛րթ, Շա՛րթ, — կրկնում է նա, — լա՛վ, ես կիմանամ և կաշխատեմ գլուխ բերել ձեր . . . հանդիպումը: Դուք ձեր ունեցվածքը թողեք այստեղ, մենք, այնուամենայնիվ, միասին կճաշենք . . . (նա շեշտեց «այնուամենայնիվը»), ես այսօր ամբողջ օրը զբաղված եմ արդուկով . . . երբ կմրսեք, ազատ կերպով ներս մտեք ու տաքացեք . . . իսկ դուք նրան շա՞տ եք սիրում . . .

— Մենք բոլորս էլ նրան սիրում ենք, — պատասխանում եմ ես, և ինձ անսահման դուր է գալիս նրա դեմքի մոլոր արտահայտությունը ու ես ավելացնում եմ, — նրան չի կարելի չսիրել . . .

— Լավ, պայմանավորվեցինք, — ասում է նա, — ես . . . կիմանամ:

— Իմացեք, խնդրում եմ, — նորից խնդրում եմ ես, — ես պիտի տեսնեմ նրան և հանձնեմ այս նվերները . . .

Ես դուրս եմ թռչում Լարիսա Սեմյոնովնայի տաքուկ անկյունից և իմ սիրտը լեցուն է երգով ու ջերմությամբ: Ես իմ քայլերն ուղղում եմ դեպի գրասենյակը և ճանապարհին հանդիպում կարգադրիչին:

— Գնանք ինձ հետ:

Նա քայլերն ուղղում է դեպի երեք տախտակաշեն արտաքնոցները:

— Արտաքնոցները չեն գործում, — բացատրում է կարգադրիչը, — տեսնո՞ւմ ես, կեղտոտում են ուր հանդիպի, արտաքնոցների շուրջը: Աղտեղությունները սառած են և հավաքելը՝ հեշտ: Ահա այս երկաթե լոմով . . . տես . . .

Նա խփեց երկաթե ձողով և սառած կոշտը թռավ մի մետր այն կողմ:

Յատուկ Պոէմ

— Հետո, շարունակեց կարգադրիչը, — ահա այս փայտե թիակով կհավաքես, կկիտես . . . ահա քո աշխատանքը . . . Հասկանալի՞ է:

— Հասկանալի է, — ասում եմ ես:

Նա հեռանում է ինքն իրենից գոհ, գործնական մարդու քայլերով, և ես անցնում եմ աշխատանքի:

Աշխատանքն իսկապես ծանր չէր, եթե չհաշվենք երկաթե ձողի ծանրությունը: Շուտով ես համոզվեցի, որ Աշոտ դային օժտված է մեծ հեռատեսությամբ: Ծանր երկաթի սառնությունը թափանցում էր նրա անհամեմատ ավելի տաք ձեռնոցների միջով, և ձեռներս սառչում էին, ի՛նչ կլիներ դրությունս, եթե ես ստիպված լինեի աշխատել իմ ձեռնոցներով: Նույնը կարելի է ասել նաև նրա մուշտակի մասին . իմ բամբակած վերարկուով ես հազիվ ինձ ճամբարից նետում էի գործարար բակը և ետ . ինչպե՞ս ես պիտի դիմանայի ցրտին այս բացօթյա աշխատանքի պայմաններում: Երրորդ անգամ լինելով, ես, անկասկած, կհիվանդանայի թոքերի բորբոքումով և . . . և ես այս անգամ կգնայի, կհասնեի Լյալյային, Ջանփոլադյանին և մնացած հազար-հազարներին . . .

Կամաց-կամաց իմ աշխատանքը դուր է գալիս ինձ . ես սկսում եմ հնարագետ դառնալ և կատարելագործվել, բարձրացնել իմ վարպետության աստիճանը, ես հիմա կարող եմ կարգադրիչից ավելի վարժ կերպով մի հարվածով թռցնել սառած, քարի նման ամուր, բայց թեթև կոշտերը: Այսպե՛ս: Այսպե՛ս . . .

Երբ ես զգում եմ, որ աշխատանքի պատճառած ջերմությունը չի տարածվում ձեռներիս և ոտներիս վրա, երկաթե ձողը ցցում եմ ձյան մեջ և քայլերս ուղում դեպի Լարիսա Սեմյոնովնայի օթևանը:

— Ես հեռվից տեսա ձեզ, — ասում է նա, — թեթև գրիչ են տվել ձեռքդ, խոսք չկա . . . Տաքացեք, տաքացեք . . . սա մի սարսափելի կոմեդիա է և ուրիշ ոչինչ . . .

Հետո նա ասում է .

— Ես եղա մայրերի բարաքում:

— Այո՞, — ուրախանում եմ ես, — տեսա՞ք գերմանուհուն:

— Տեսա, — ասում է նա, — ծանոթացա, պատմեցի ձեր մասին . . . Հիմա այս արդուկի պես մի ծանրություն եմ զգում սրտիս վրա . . . Լավ կլիներ, եթե չգնայի . . . Երևում է, որ ժամանակին գեղեցիկ է եղել, ինչ հիանալի, թափանցող աչքեր ունի . . . Ուրեմն, նրա, այսպես կոչված, ամուսինը ադրբեջանցի՞ է . . . Որտեղից՝ որտեղ . . . Երեխան չի ապրի, չէ, նվազ է, նիհար . . . Եվ ի՞նչն է հետաքրքիր, գլուխը մի տեսակ երկարավուն է, ինքը սև . . . ասում է, որ հորն է նման, ասում է . . .

Լարիսա Սեմյոնովնան թողնում է արդուկը և սպիտակ թաշկինակով սրբում արցունքները:

— Լավ կլիներ, եթե չգնայի, չտեսնեի, — կրկնում է նա, — աչքիս առաջից չի հեռանում:

Մի րոպե ես ինձ կորցնում եմ: Առհասարակ, երբ կինը լալիս է, ես ինձ կորցնում եմ: Ուրիշ պայմաններում գուցե ես գտնեի համապատասխան մոտեցում, իսկ հիմա խելքի մոտ ոչ մի բան չեմ կարող մտածել: Ես միայն բավականանում եմ ասելով:

— Պետք չէ արտասվել, առանց այն էլ մեր կյանքը . . . էնիքը:

— Ճաշի ընդմիջումին մոտեցեք . . . ես կասեմ տեղը: Իսկ հիմա տաքացեք և ուշադրություն մի դարձրեք իմ արցունքներին . ես մի քիչ չէ, շատ սենտիմենտալ եմ, և ինչպես երևում է, բնությունն ինձ շատ է արցունք տվել . ես միշտ հարմար առիթ եմ փնտրում թափելու այն, այլապես նրա շատությունից ես կարող եմ խեղդվել . . . Ուշադրություն մի՛ դարձրեք . . .

Ես ի վիճակի չէի անուշադրության մատնել Լարիսա Սեմյոնովնայի արցունքները և ուշադրություն չդարձնել մանավանդ այն բանի վրա, որ նա լալիս էր փոքրիկ աղջկա նման, ես հազիվ կարողացա ինձ զսպել, ես ուզում էի մոտենալ փայփայել և քնքուշ խոսքերով կտրել նրա լացը: Դրա փոխարեն ես զբաղվեցի գերմանուհուն բերած նվերները հանելով տոպրակից և դասավորելով

սեղանի վրա: Ես հիշեցի մորս, նա էլ լալիս էր փոքր աղջկա նման: Մեծ հոգեբան լինելու կարիք չկար հասկանալու համար, որ իմ նոր, հազար տարվա ծանոթը լալիս էր ոչ միայն գերմանուհու նորածինի, այլև իր երկու զավակների համար: Լարիսա Սեմյոնովնան սեղանի գզրոցից դուրս հանեց մի թերթ, խնամքով փաթաթեց օժիտը և ասաց.

Ճաշի ընդմիջումին... ես կասեմ տեղը... կհանձնեք, կխոսեք... Խե՛ղճ մենք, խե՛ղճ մենք... դուք պատրաստվում եք գնա՞լ... լավ տաքացա՞ք... աշխատելիս մի՛ շտապեք, չկարծեք, եթե կատարեցիք առաջադրանքը, կհանգստանաք: Ձեզ կլծեն նոր աշխատանքի, այնպես որ... ասենք, ինչու եմ ձեր գլխին նոտացիա կարդում, դուք պետք է որ յուրացրած լինեք լագերային տարրական ալֆաբետը... Ի՛նչ լավ կլիներ, եթե դուք մեզ մոտ ընկնեիք... Մենք միասին... կխոսեինք Յանկա Կուպալայի, Յակոբ Կոլասի մասին... Չգիտեք որքա՛ն ծանր են անցնում օրերը, ո՛չ մի ինտիմ խոսակից, ոչ մի մոտիկ...

— Պետք է որ այստեղ մի հայ ուսուցիչ լինի, դուք չգիտե՞ք նրան, — հարցնում եմ ես:

Այո՛, Լարիսա Սեմյոնովնան մի քանի անգամ հանդիպել է նրան: Վարդան... ճիշտ է, Կարապետյան: Հյուսիսային Կովկասից էր: Լռակյաց, քաշված մարդ էր... ոչ, առանձնապես մոտիկություն չի ունեցել... տարիքոտ մարդ էր: Նրան էտապ տարան, մի քանի օր առաջ... սպասեք, մի հայ էլ կա այստեղ... կիսագրագետ մարդ է: Եթե ես նրան պատահաբար հանդիպեմ, կասեմ...

Լարիսա Սեմյոնովնան շողացնում է ինձ վրա իր կապույտ, խոշոր աչքերը, կապում իմ գլխարկի կապերը, և ես դուրս եմ գալիս ու անցնում իմ պարտականությունների կատարմանն անորոշ զգացումով:

Հիմա աշխատանքն ավելի դանդաղ է ընթանում: Ես մտածում եմ գերմանուհու ու նրա դատապարտված մանկան մասին: Աչքիս առաջ կանգնում են նրա փոքրիկ արձանիկները և հատկապես Մամոյի գլուխը՝ կախված, տխուր բեղերով: Հետո ես ինձ որսում եմ այն բանի վրա, որից ներսս տաքանում է. ես ասես դիտմամբ

մտածում եմ գերմանուհու, նրա արձանիկների, Մամոյի և նրանց նորածնի մասին, որ չհիշեմ Լարիսա Սեմյոնովնայի կապույտ, խոշոր աչքերը:

Մինչ այս, մինչ այն՝ հնչում է ճաշի գոնգը: Այստեղի գոնգն է՛լ ավելի փոքր է և հնչում է ծիծաղելի՝ ճը՛նգ, ճը՛նգ: Ուրիշ է մեր ճամբարի գոնգը՝ ծանր, անգամ հանդիսավոր՝ դը՛նգ-դը՛նգ: Ես ազատվում եմ երկաթածողի ծանր սառնությունից կամ սառը ծանրությունից և դիմում եմ դեպի . . .

Օդը հագեցած է հոտավետ օճառի բուրմունքով: Լարիսա Սեմյոնովնան, ըստ երևույթին, զբաղվել է արդուզարդով: Նա հագել է մութ-ծաղկավոր զգեստ և հիմա թվում է ավելի քան երիտասարդ:

— Ես իմ ճաշն արդեն ստացել եմ, գնացեք, ստացեք ձեր ճաշը, որից հետո . . . որից հետո կասեմ, թե ի՛նչ պետք է անեք:

Ես գնում, ստանում եմ ճաշը, վերադառնում: Լարիսա Սեմյոնովնան ցույց տալով պատուհանից դուրս՝ ասում է .

— Ահա, տեսնո՞ւմ եք ցանկապատի եռանկյունին . . . Կմոտենաք համարձակ, այնտեղ մի տախտակ պոկված է . . . վերցրեք ձեր այուրպրիզը:

Գերմանուհին ինձ սպասում էր: Ես նրան տեսա երկարավուն, գորշ աղյալով փաթաթված, երևի երեխան՝ գրկին, ցանկապատի մոտ, ետ ու առաջ քայլելիս: Նա լսեց իմ ոտնաձայնը և մոտեցավ անցքին:

— Բարև, — ասում եմ, — Լյուդմիլա Կարլովնա . . . ահա այս՝ ձեզ: Շնորհա . . .

— Ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ . . . մի՛ շնորհավորեք, դուք կարող եք միայն ցավակցել . . . անչափ-անչափ շնորհակալ եմ ուշադրության համար: Ինչպե՞ս եք, ինչպե՞ս է Մումուն . . .

— Մենք բոլորս էլ լավ ենք . . . Մամոն արդեն տանն է . . .

Յատուկ Պոէմ

— Այո՞ . . . այսօր լրացավ ութ օրը: Ծնվելիս միայն լսեցի նրա ձայնը . . . որից հետո լռեց . մի անգամ աչքը բացեց ու նորից փակեց: Ըստ երևույթին, չուզեց տեսնել իմ երեսը: Բայց լսում է . երբ կամաց ձայնով երգում եմ, կոպերը թրթռում են . . . չի խոսում, երևի շատ բան ունի ասելիք . . .

Նա փաթեթը դրեց ձյան վրա, ավելի մոտեցավ ցանկապատին և բացեց երեխայի երեսը:

— Ահա, տեսնո՞ւմ եք, հոր մանրանկարը . . . ականջները միայն իմն են . . .

— Իսկ . . . ի՞նչ դրիք անունը:

— Սրանք անուն չունեն, սրանք համարներ ունեն: Իսկ ես՝ Մո՛ւ եմ կանչում . . . Մո՛ւ . . .

Նրա գրավիչ, տխուր աչքերն ավելի են տխրում:

— Մո՛ւ . . .

Ինձ հիմա թվում է, որ մի բան էլ կա ասելու կամ անելու ես մտքումս որոնում եմ ու . . . գտնում: Գլխարկիս պատռվածքներից մեկի խորքից ես դուրս եմ հանում եռանկյունի, կարված նամակը:

— Եվ նամա՞կ . . . Անչափ, անչափ շնորհակալ եմ . . . իսկ հիմա գնացեք, բարևներ մայեստրոյին, Իոհաննեսին . . . մնաս բարով չեմ ասում, ցտեսություն . . . Շուտով երևի տեսնեմ բոլորիդ . . . Մումույին այդպես էլ ասեք . . . ըստ երևույթին, մեզ վիճակված է ապրել առանց Մուի . . . Ես էլ երկար չեմ ապրի, ըստ երևույթին . . . Բոլոր նշանները կան . . . անընդհատ ջերմություն ու արյուն . . . իսկ արյունը սև է . . .

— Երևի լնդերից է, — ասում եմ ես, գոհ իմ գյուտով:

— Ոչ, ոչ, — բողոքում է նա, — ներսից է . . . ինչ-որ բան այրվում է ներսս, և նրա ծխից սևացել է արյունը: Այդ կարևոր չէ: Կարևորն այն է . . . Ես ինքս էլ չգիտեմ, ո՛րն է կարևոր . . . ցուրտ է . . . ցտեսություն . . .

Յատուկ Պոէմ

Նա կռանում, ձյուների վրայից վերցնում է փաթեթը և հեռանում երեխան գրկին՝ անհաստատ քայլերով, իսկ ես վերադառնում եմ իմ օթևանը:

Ճաշում ենք լուռ: Միայն մի անգամ ես ինձ վրա զգում եմ Լարիսա Սեմյոնովնայի ուշադիր հայացքը: Շնչե՞լն է դժվարացել, թե ուտելը: Ես արագ զգեստավորվում եմ առանց կողմնակի օգնության և ինձ դուրս նետում: Քամի է բարձրացել: Հիմա ինձ մնում է ի մի հավաքել տեղահանված կոշտերը: Ես վերցնում եմ փայտե թիակը և աշխատում այնպես անել, որ քամին թիկունքից փչի: Շնչե՞լն է դժվարացել, թե աշխատելը: Որտեղի՜ց որտեղ՝ հիշում եմ Բալաշովի երգը:

Սիրելի՛ս, սիրելի՛ս, ես քո՛նն եմ,

Ա՛խ, այսպես էլ մութ գիշե՞ր . . .

Իզուր չէր, որ ես հիշեցի Բալաշովին, ես լսում եմ ոտնաձայներ և հետո նրա ձայնը .

— Տեսնում եմ, որ դու էլ վերջացնում ես: Մազուրովն ասաց, որ շուտով ճանապարհ ենք ընկնելու . . . Քամին դեմից է փչում և դժվար կլինի քայլելը . . . Կվերջացնես, կգաս . . .

Իսկ մի քիչ հետո՝ կարգադրիչի ձայնը:

— Ահա և բոլորը: Տեղեկանքը՝ կատարված աշխատանքի մասին, Բալաշովին տվի: Դուք ազատ եք: Կեցցե՛ ազատությունը . . .

Հետո նա մոտենում է ինձ և համարյա ականջիս ասում .

— Այստեղ մի մարդ կա նստած, որին տասը տարի են տվել այս բացականչության համար . . . — ու նորից կրկնում է, — դուք ազատ եք, կեցցե՛ ազատությունը . . .

Ու գնում է:

Յատուկ Պոէմ

Ես թողնում եմ իմ ձեռքով մաքրված աշխարհամասն ու գնում Լարիսա Սեմյոնովնային հրաժեշտ տալու և իմ իրերը վերցնելու: Լարիսա Սեմյոնովնան անսահման ուրախ է մեր հանդիպման ու ծանոթության համար . նա հիմա գիտե, որ Երրորդում բարեկամ ունի, թող պարադոքս չթվա, այս տխուր օրվա համար նա աշխարհի չափ ուրախ է և նա բաժանվում է ինձնից նոր հանդիպման ամենաջերմ ցանկությամբ: Նա խնդրում է ջերմորեն բարևել մեր կոլեկտիվին, խոստանում է հետաքրքրվել գերմանուհու ճակատագրով և օգնել, որքան կարող է: Հանուն հումանիզմի: Ես մոտենում եմ նրան և համբուրում նրա ձեռքը, իսկ նա վերջին անգամ ողողում է ինձ իր խոշոր, կապույտ աչքերի փայլով և շրթունքներով դիպչում է իմ . . . կարծեմ ճակատին .

— Ես ձեզ կգրեմ, եթե դեմ չեք լինի, — ասում է նա:

— Օ՛, ես վաղուց սիրային նամակ չեմ ստացել, — թեթևանում եմ ես, — ես շատ ուրախ կլինեմ . . .

— Ես ձեզ կգրեմ, — կրկնում է նա խորին լրջությամբ և մենք բաժանվում ենք:

Հիմա ես կանգնած եմ պահակատան դռան մոտ և սպասում եմ Բալաշովին, որ միասին ներս մտնենք: Քամին սուրում է բարձր ցանկապատի և փշալարերի միջով: Ձյունը սառել է լարերի ու երկաթե փշերի վրա, և մի րոպե թվում է, որ նրանք ծաղկել են ինչպես խնձորենին է ծաղկում գարնանը: Եվ ճիշտ այս րոպեին ինձ մոտենում է հնամաշ շորերի մեջ կորած մի լուռ կալանավոր: Ես ուշադրությամբ նայում եմ նրա նիհար, սև, մազակալած դեմքին և մեծ բանաստեղծի ասածի պես՝ նրա աչքերում հառնում է նա, հեռու ու հարազատ երկիր Նաիրին:

— Հա՞յ ես, քե մատաղ, — հարցնում է նա, անհուն մի ցավով նայելով դեմքիս:

— Հայ եմ, — պատասխանում եմ ես վախենալով, որ տեսածս տեսիլք կարող է լինել:

— Հայ եմ, — հաստատում եմ նորից: — Ո՞րտեղացի ես . . .

— Ղարաբաղցի՛ եմ, քե՛ մատաղ, ղարաբաղցի՛ . . .

Յատուկ Դրէմ

— Ի՞նչ գործով ես նստած . . .

— Ի՞նչ գործով, — հեգնում է նա ցրտից սրթսրթալով, — ինչ գործո՛վ . . . բա դարաբաղցուն էլ կհարցնե՞ն ինչ գործով ա նստա՛ծ . . .

— Բա ինչո՞ւ չեն հարցնի, — հարցնում եմ ես:

— Բա դու Բալունց Հեթումի անունը չես լսե՞լ . . .

— Չէ, չեմ լսել, — պատասխանում եմ ես և իսկապես չեմ լսել:

— Էդ ես եմ, որ կամ . . . Բալունց Հեթումին որ նստացրիլ են ոչ՝ աշխարհը վաղուց դարմադաղան էր եղել, քե՛ մատաղ . . .

— Աշխարհը՝ չէ, գուցե Ղարաբա՞ղը, — անցնում եմ ես բանակցության:

— Բա Ղարաբաղն աշխարհ չի, ի՞նչ ա . . . ինձ ասել են թե ես ուզալ ըմ Ղարաբաղը պոկեմ Ադրբեջանից ու Հայաստանին կցեմ: Այ քե մատաղ, ես հի՞նչ կտրող-կցո՛ղ եմ: Հի՞նչը կտրեմ, հինչի՞ն կցեմ: Բա սա ասելու բա՞ն ա . . . Բա սրա համար մարդու կհանեն տնից, հողից, աշխատանքից ու Սիբիրնե՞ր կքշեն . այ քե մատաղ . . . էն քորփեն հինչ ա, նա էլ գիտի, որ Ղարաբաղը է՛է՛է՛, աթադան-բաբադան Հայաստան ա եղել ու Հայաստան էլ կա . . . Ե՞ս պիտի կտրեմ, կցեմ . . . Բո՛ո՛, — անդրադարձավ նա ատամները ցրտից չխկչխկացնելով, — ցուրտը ջանս մտավ . . . ես քինացի . . . տաքերն ընկնեն՝ կնստենք, կխոսենք . . . ասում եմ՝ տաքերն ընկնեն, միտքս լավ հասկացի . . . Բալունց Հեթում որ ասում են, ես եմ, իմացած կաց . . .

Ու քամու հետ գլորվելով՝ նահրյան ոգին տեսիլքի նման դյութական՝ անհետացավ մոտակա գետնափոր բարաքներից մեկում:

Ես ուշքի եմ գալիս: Որտե՞ղ եմ ես, ի՞նչ անելու համար եկա Առաջին:

Քամին սուլում էր բարձր ցանկապատի ու խիտ փշալարերի միջով, ու երգում էին փշալարերը, իսկ նրանց երգը ժանգոտ էր ու արյունոտ, իսկ արյունը սև էր:

Մոտեցավ Բալաշովը: